Հաշվի առնելով վերոնշյալը և այն հանգամանքները, որ հայցը ենթակա է մասնակի բավարարման, իսկ Հայցվորի կողմից նախապես 1,120.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումարը, Դատարանը եզրահանգում է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հօգուտ «Սիլ ինշուրանս» ԱՓԲ ընկերության ենթակա է բռնագանձման 560.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար, իսկ մնացած մասով դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Սիլ ինշուրանս» ԱՓԲ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, երրորդ անձինք՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, «Գործակալ 1» ՍՊ ընկերություն՝ ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-24/7-Վ ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու և 2023թ. դեկտեմբերի 29-ի թիվ 3 արձանագրությունը մասնակի՝ կապված 1-3-րդ չափաբաժինների մասով «Գործակալ 1» ՍՊ ընկերությանը հաղթող /ընտրված/ մասնակից ճանաչելու և «Գործակալ 1» ՍՊ ընկերության հետ պայմանագիր կնքելու հետ, անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել՝ մասնակի:

ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-24/7-Վ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023թ. դեկտեմբերի 29-ի թիվ 3 արձանագրությունը մասնակի՝ կապված 1-3-րդ չափաբաժինների մասով «Գործակալ 1» ՍՊ ընկերությանը հաղթող /ընտրված/ մասնակից ճանաչելու և «Գործակալ 1» ՍՊ ընկերության հետ պայմանագիր կնքելու հետ, ճանաչել անվավեր:

Հայցը մնացած մասով մերժել:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հօգուտ «Սիլ ինշուրանս» ԱՓԲ ընկերության բռնագանձել 560.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ծանոթություն: վճիռը մտել է օրինական ուժի մեջ

« » _____ 2024թ.:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ